ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

04.02.2020թ

2019 թվականի կիսամյակի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝

Անցկացվել է համայնքի ավագանու6 հերթական և 8 արտահերթ նիստ՝ ընդամենը 14 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր. ավագանու որոշումները սահմանված ժամկետներում առաքվել են Արմավիրի մարզպետարան.

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնվել նրանց դիմումներն ու բողոքները և տրվել պատասխաններ, քաղաքացիներին տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:

Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2020թվականի բյուջեն, համայնքի ընթացիկ տարվա բյուջեում առաջարկվող փոփոխությունները, օրենքով սահմանված կարգով ապահովվել է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը; Համայնքի սանիտարական վիճակի ապահովման համար բյուջեի միջոցներով ձեռք է բերվել ԶԻԼ մակնիշի ինքնաթափ բեռնատար մեքենա՝ արժեքը 2730000 դրամ, համայնքապետարանի աշխատանքների անխափան կազմակերպման նպատակով ձեռք է բերվել բենզինային գեներատոր՝ արժեքը 200000դրամ:

Համայնքի ուսանողների անվճար երթևեկության կազմակերպման համար ձեռք է բերվել ավտոբուս՝ 3520000 դրամով:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային հողային հիմքով առուների մաքրման և եզրերի խոտհնձման աշխատանքներ, իրականացվել է նաև կիսախողովակների մաքրման աշխատանքներ, կատարվել է դաշտամիջյան շուրջ 4կմ ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ:

«Զրայիմ տնտեսության ԾԻԳ» պետական հիմնարկի հետ միասին սկսվել է համայնքում ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման աշխատանքները, համայնքի 10% համաֆինանսավորման պայմանով:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

Օրենքով սահմանված կարգով վարվել է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի զինակոչիկներին ժամանակին բաժանվել են ծանուցագրեր, համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել է ամառային և ձմեռային զորակոչերը: Համայնքի 4 զինակոչիկի տրամադրվել է երթեկության գումար՝ 80.000 դրամ՝ էջմիածնի ավտոդպրոցում սովորելու ընթացքում ճանապարհածախսը ապահովելու համար:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Համայնքի բյուջեի ֆոնդային մասով համայնքում տեղադրվել են արևային էներգիայով աշխատող սարքավորումներ, որոնք ապահովվում են համայնքի բոլոր փողոցների գիշերային լուսավորումը, ինչպես համայնքապետարանի, մանկապարտեզի և մշակույթի տան էլեկտրոմատակարարման հարցը՝ ծախսը 8.993.000 դրամ:;Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ համայնքին պատկանող աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ: Համայնքի տարածքում

անցկացվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցները, գյուղամիջյան հատվածը, կոնսերվացվել է համայնքում առկա աղբանոցի տարածքը: մայրուղու համայնքով անցնող տարածքը; Համայնքի բյուջեի միջոցներով կազմակերպվել իրականացվել է համայնքի գիշերային լուսավորություն չունեցող փողոցների լուսավորման հարցը, համայնքի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիրի և կանգառների կառուցումը, համայնքի կենտրոնական փողոցում և կենտրոնում տեղադրվել են շուրջ 90աղբաման: : Միջհամայնքային երկու փողոցների վրա տեղադրվել են երթևեկության դանդաղեցմանն ուղղված 9 ասֆալտաթմբեր՝ ծախսը 1.000.000 դրամ; Համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է համայնքի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիր և 4 կանգառ: Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ ասֆալտապատվել է համայնքի 2 փողոց՝ 700մ տարածքով: Խճապատվել է համայնքի մեկ փողոց՝ տարածքը 2000քմ:

Առևտրի և ծառայությունների բնագավառում

Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն, ինչպես նաև հսկողություն է իրականացվել առևտրի կետերում /խանութներում/:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքի միջոցներով մարտ ամսից իր աշխատանքներն է սկսել համայնքի մանկապարտեզը, որն ունի 2 խումբ:Մանկապարտեզը մարտ- ապրիլ, ինչպես նաև նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ջեռուցվել է: Մանկապարտեզ հաճախում են 62 երեխա: Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի ծնողական վճարի ամսական գումարը համայնքի ավագանու որոշմամբ սահմանվել է 4000դրամ, երեխայի ամսական ծախսի տարբերությունը /շուրջ 12000դրամ/ սուբսիդավորվում է համայնքապետարանի կողմից՝ համայնքի բյուջեի միջոցներով: Համայնքապետարանի վերահսկողության տակ են գտնվում մանկապարտեզի սանիտարական վիճակը և աշխատակազմի կարգապահական նորմերը:

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Տեառընդառաջին, Մարտի 8-ին, ինչպես նաև հատկացվել են նվերներ: Կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Մայիսի 9-ին: Տեառընդառաջի կապակցությամբ համայնքի 10 նորապսակ ընտանիքների հատկացվել է նվերներ՝ 200.000 դրամ արժողությամբ: Մարտի 8-ի կապակցությամբ նվերներ են հատկացվել համայնքապետարանի, բուժամբուլատորիայի և մանկապարտեզի աշխատակիցներին, իսկ դպրոցում կազմակերպվել է միջոցառում: Միջնակարգ դպրոցն ավարտելու կապակցությամբ համայնքի 20շրջանավարտների տրամադրվել է նվեր՝ յուրաքանչյուրին 5000դրամ արժողությամբ՝ ընդամենը 100.000դրամ:

Համայնքի կենտրոնական մասում բարերար՝ համայնքի նախկին բնակիչ Վ. Խաչատրյանի նվիրատվությամբ Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերին նվիրված հուշակոթաղի բացման կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, միջոցառումներ են կազմակերպվել՝ նվիրված Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին, որի շրջանակներում համայնքի 1-10 տարեկան երեխաներին բաժանվել են նվերներ/տոպրակներ/ 300000դրամ արժողությամբ:

Սոցիալական պաշտպանության բնագավառում

Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին, համայնքի նորապսակ և երիտասարդ ընտանիքներին, համայնքի զորակոչիկներին, ինչպես նաև հատկացվել է 166.000դրամ՝ համայնքի մարզադպրոցում զոհված ազատամարտիկների հիշատակին կազմակերպված

հուշամրցաշարի շրջանակներում հաղթող մարզիկների համար հուշամեդալների, գավաթների և նվերների ձեռքբերման համար: Համայնքում շարունակական բնույթ է կրում երեխա ունենալու կապակցությամբ երիտասարդ ընտանիքներին խրախուսելը և դրամական օգնություն տալը՝ առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ 50.000-ական դրամ, երկրորդ և երկրորդից ավելի երեխա ծնվելու պարագայում՝ 70.000-ական դրամ: Այս ժամանակահատվածում դրամական օգնություն է հատկացվել համայնքի 16 երիտասարդ ընտանիքի՝ ընդամենը 980.000 դրամ: Համայնքի բնակիչ համարվող անձանց մահվան կապակցությամբ համայնքապետարանի կողմից, որպես հարգանքի տուրք, ձեռք են բերվել բնական ծաղկեպսակներ՝ 320.000դրամ արժողությամբ:

ժամանակին վճարվել է համայնքապետարանի և մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:

Անցկացվել է համայնքային 2 ծառայողի ատեստավորում:

Ընդունվել է համայնքի ղեկավարի104 որոշում, արձակվել է99 կարգադրություն:

ժամանակին վճարվել է համայնքապետարանի և մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:

Կիսամյակի կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝

հարկային եկամուտները՝ հողի հարկ պլան 14854.4հ/դ , փաստացի 13271.0 հ/դ, կատարողական 89.3%, գույքահարկ պլան 6387.0 հ/դ, փաստացի 7665.0 հ/դ, կատարողական 120 %, տեղական տուրքեր պլան 508.5 հ/դ, փաստացի 297.0հ/դ, կատարողական 58.4%, տեղական վճարներ պլան 4280.5/դ փաստացի 2448.6 հ/դ, կատարողական 58 %, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 20.0 հ/դ, փաստացի 499.7 հ/դ, կատարողական 250%,դոտացիա պլան 45464.6հ/դ, փաստացի 45464.6 հ/դ, կատարողական 100%,համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից սպասվելիք գումար պլան 1000,0հ/դ, փաստացի 0/դ, տարեսկզբի ազատ մնացորդ 22038.3 հ/դ , ընդամենը եկամուտներ՝ պլան 95286.3 հ/դ, փաստացի 92632.5 հ/դ, կատարողական 97%:

Ծախսեր՝ Տեղական ինքնակառավարում պլան 27965.0 հ/դ, փաստացի 27047.0հ/դ, կատարողական 96%, սոց. օգնություն պլան 6798.0 հ/դ, փաստացի 6715.0 հ/դ, կատարողական 99%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 1467.0հ/դ, փաստացի 1466.0հ/դ, կատարողական 100%, կրթություն և գիտություն պլան 12303.0հ/դ, փաստացի 12003.0/դ, կատարողական 97 %, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ պլան 4665.0հ/դ, փաստացի 4424.8 հ/դ , կատարողական 94%,

աղբահանություն պլան 4226.5հ/դ, փաստացի3453.1հ/դ կատարողական 82%, արտաքին լուսավորում պլան 6800.0 հ/դ, փաստացի 6800.0 կատարողական 100%, ճանապարհների վերանորոգում պլան 1000,0 հ/դ, փաստացի 1000,0հ/դ, կատարողական 100 %,

ոռոգում պլան 6060.0/դ, փաստացի 3000.0 կատարողական 49.5%, գյուղատնտեսություն պլան 468.0հ/դ, փաստացի 429.0հ/դ կատարողական 92%, ֆոնդային բյուջե պլան 23478.3հ/դ, փաստացի 22415.4 հ/դ, կատարողական 96 %, Ընդամենը ծախսեր պլան 95286.3 հ/դ, փաստացի 88753.3 հ/դ, կատարողական 93%:

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ հիմնախնդիրները՝

<u>Համայնքում առկա խնդիրներն են</u>

Մշակույթի տան շենքի մասնակի նորոգում:

Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները ամբողջությամբ հնամաշ և վնասված են:

Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը :
Անհրաժեշտ է գազաֆիկացնել համայնքի 2 փողոց
Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման աշխատանքները:
Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:
Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:
Անմխիթար վիճակում է գտնվում համայնք սնուցող էլեկտրական ցանցը, անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի՝ կապված լարերի անպիտանիության հետ:
Համայնքի հողերի ոռոգումը պատշաճ կազմակերպելու համար հարկավոր է 2 նոր խորքային հորի հորատում և առկա 4 հորերի նորոգում:
Համայնքում հանդիսությունների սրահի բացակայություն:

Գեղակերտ համայնքի ղեկավար Ց. Հակոբյան